

# ԽՈՂԵՄՈՒԹՅՈՒՆ

*“Խորագետ եղէք օձերի պէս և միամիտ՝ աղավնիների նման” Մատթէոս, Ժ 16*

Հատված Անդրե Կոմթ-Սփոնվիլի “Մեծ առաքինությունների մասին համառոտ քննախոսություն. Իմաստասիրության օգտագործումն առօրյա կյանում” գրքից (Լոնդոն, Վիլյամ Հեյմենման, 2001թ., ֆրանսերենից անգլերեն թարգմանված Քեթրին Թեմերսոնի կողմից): Andre Comte-Sponville, (trans. Catherine Temerson), *A Short Treatise on the Great Virtue: The Uses of Philosophy in Everyday Life*, (London: William Heinemann, 2001).

Խոհեմությունը հին աշխարհի և միջնադարի չորս հիմնական առաքինություններից մեկն է:<sup>1</sup> Խոհեմությունը չափազանց շահավետ է թվում բարոյական լինելու համար, ինչպես որ պարտականությունն է չափազանց բացարձակ թվում խոհեմություն կոչվելու համար:

Մենք այլևս բավարար չափով չենք հավատում բացարձակին, որ կամենանք մեր կյանքը, մեր ընկերներին կամ մերձավորներին զոհաբերել հանուն գաղափարի: Հիրավի, կարծում եմ, որ այդպիսի համոզմունքի բարոյականությունը մենք կհամարեինք, ինչպես Մաքս Վեբերն է այն անվանում, (“Gessinungsethik”) բավականին ահարկու: Ո՞րն է բացարձակ սկզբունքներ ունենալու արժեքը, եթե դա ի վնաս է պարզ մարդկայնությանը, իսկամտությանը, մեղմությանն ու կարեկցանքին: Մենք սովորել ենք նույնիսկ բարոյականության հանդեպ զգույշ լինել և որքան այն բացարձակ լինելուն է հավակնում, այնքան մենք ավելի զգուշավոր ենք դառնում: Մեզ համար համոզմունքի բարոյականությունից ավելի գերադասելի է այն, ինչը Մաքս Վեբերը անվանում է պատասխանատվության բարոյականություն (“Verantwortungsethik”), որն առանց սկզբունքներն անտեսելու (այլ կերպ ինչպե՞ս կարելի է), հաշվի է առնում նաև արարքների կանխատեսելի հետևանքները: Բարի նպատակները կարող են աղետի հասցնել, և ազնիվ մղումները երբեք չեն կարողացել կանխել վատթարագույնը: Մոսկ բարի մղումները բավարար չեն և սխալ կլինեք գործել՝ դրանք բավարար համարելով: Ուստի, պատասխանատվության

---

<sup>1</sup> Մյուսները համարձակությունը, չափավորությունն ու արդարությունն են:

բարոյականությունը պահանջում է, որ մենք պատասխանատու լինենք ոչ միայն մեր նպատակների կամ սկզբունքների համար, այլև մեր արարքների հետևանքների համար՝ այնքանով, որքանով դրանք կանխատեսելի են: Դա խոհեմության բարոյականությունն է՝ միակ գործունակ բարոյականությունը:

*Նախընտրելի է* Գեստապոյում սուտ խոսելը, քան հրեային կամ դիմադրության մարտիկին մատնելը: Բայց հանուն ինչի՞: Հանուն խոհեմության, ինչը նշանակում է ճիշտ վճռել (մարդու համար և մարդու կողմից), թե որն է *նախընտրելին*:

Հայտնի է, որ հռոմեացիք հունարենից “*pronesis*” բառը թարգմանեցին որպես “*prudentia*”, հատկապես Արիստոտելի և ստոիկների աշխատությունների թարգմանություններում: Ի՞նչ է նշանակում այս բառը՝ մտավոր առաքինություն և բանականություն: Խոհեմությունն այն ունակությունն է, որը հնարավորություն է ընձեռում ճիշտ կողմնորոշվել, թե մարդու համար որն է լավը և որն է վատը (ոչ թե ինքնին, այլ աշխարհում՝ ինչպես որ է, ոչ թե ընդհանրապես, այլ մասնավոր իրավիճակներում), և այդպիսի կողմնորոշմամբ՝ պատշաճ գործելը: Կարելի է դրան խելամտություն անվանել, բայց բարի կամքի ծառայության մեջ: Կամ էլ խելացիություն, բայց ի նպաստ բարու: Այս առումով, խոհեմությունը մյուս բոլոր առաքինությունների նախապայմանն է, առանց նրա մենք չենք կարող իմանալ, թե ինչպես գործադրենք մյուս առաքինությունները, կամ ինչպես հասնենք այն նպատակին (բարուն), որը հրամցվում է մեզ: ... Սուկ արդարություն սիրելը մեզ արդար չի դարձնում, ոչ էլ խաղաղասիրությունը, ինքնըստինքյան, հանգեցնում է խաղաղության: Նաև անհրաժեշտ է խորհել, վճռել և գործել: Խոհեմությունը պարզում է, թե ինչն է պատշաճ, ինչպես որ համարձակությունը ծառայում է ընտրված նպատակի իրականացմանը:

Ստոիկները խոհեմությունը գիտություն էին համարում (“Ինչ անելու և ինչ չանելու գիտություն”, - ասում էին նրանք): Արիստոտելը իրավացիորեն հերքեց նրանց կարծիքը, քանզի գիտությունը հիմնվում է ճշգրտությունների վրա, իսկ խոհեմությունը գործ ունի միայն պատահականությունների հետ: Խոհեմությունը ենթադրում է անորոշության, վտանգի, արկածի և չգիտեցածի իրավիճակ: Աստված դրա կարիքը չի ունենա, բայց ինչպես կարող է մարդը գործել առանց խոհեմության: Խոհեմությունը գիտություն չէ: Ավելի շուտ, այն գիտության տեղն է զբաղեցնում, երբ գիտությունը բացեր ունի: Մարդ ծանրութեթև է անում, միայն երբ նա պետք է ինչ-որ

բան որոշի, այլ կերպ ասած՝ երբ բացակայում է որևէ հիմնավորող ապացույց կամ այն անբավարար է: Այսպիսով, սա այն դեպքն է, երբ մեկը պիտի ձգտի ոչ միայն լավ նպատակների, այլև համարժեք միջոցների, այդ նպատակներին հասնելու համար: Լավ հայր լինելու համար, բավարար չէ երեխաներին սիրելը, ոչ էլ բավարար է նրանց բարին ցանկանալը, որպեսզի այն կատարվի: Մերը չի արդարացնում խելամտության պակասը: Հույները սա գիտեին, գուցե մեզնից էլ լավ: “Phronesis”-ը գործնական իմաստության պես է՝ գործելու իմաստություն, իմաստություն գործելու համար և գործող իմաստություն: Այնուհանդերձ, խոհեմությունը իմաստությանը չի փոխարինում (իրական իմաստությանը՝ “sophia”), որովհետև բավարար չէ լավ գործել՝ լավ ապրելու համար, կամ առաքինի լինել՝ երջանիկ լինելու համար: Այս պարագայում, Արիստոտելը ճիշտ էր, և հին աշխարհի մյուս գրեթե բոլոր ներկայացուցիչները սխալ էին: **Առաքինությունը երջանկության միակ նախապայմանը չէ: Խոհեմությունը, սակայն, երկուսի համար էլ նախապայման է, և անգամ իմաստությունը չի կարող առաջնորդվել առանց նրա: Քանզի իմաստությունն առանց խոհեմության կլիներ անկայուն իմաստություն, ուստի և առհասարակ իմաստություն չէր լինի:**

Էպիկուրը, հավանաբար, կարևորագույն փաստարկն առաջ քաշեց՝ խոհեմությունը, քանի որ այն ընտրեց [կամ ընտրում է] (“չափելու ... և առավելություններն ու անպատեհությունները դիտարկելու միջոցով”), թե որ պահանջները պետք բավարարվեն և ինչ կերպ, ուրեմն “ավելի թանկ է, քան նույնիսկ իմաստասիրությունը”: Ճշմարտությունն ինչների՞ն է պետք, եթե չգիտենք ինչպես ապրել: Արդարությունն ինչի՞ն կարող է ծառայել, կամ մենք ինչու՞ պետք է նրա կարիքն ունենայինք, եթե չկարողանայինք գործել արդարորեն: Խոհեմությունը, կարելի է ասել, իսկական “savoir-vivre” է (իմանալ՝ ինչպես ապրել): ... Խոհեմությունը նախատեսում կամ հաշվարկում է հաճույքը: Այն ամենուր աշխարհիկ առաքինություն է և երբեմն էլ՝ պատեհապաշտ: Որովհետև, խոհեմությունը հաշվի է առնում ապագան, մշտապես նկատի ունենալով, որ մենք ինքներս ենք որոշում ու՞մ (կամ ու՞մ հետ) դիմակայել (նման դեպքերում խոհեմությունը առնչվում է ոչ թե ակնկալիքին, այլ կամքին): Խոհեմ մարդն ուշադրություն է դարձնում ոչ միայն այն հանգամանքին, թե ինչ է կատարվում, այլև՝ թե ինչ կարող է կատարվել: Նա և ուշադիր է, և զգույշ: “Prudentia” բառը, նշում է Ցիցերոնը, գալիս է “providere” բառից,

ինչը նշանակում է “կանխատեսել”, ինչպես նաև “միջոցներ ձեռնարկել”:

Իրականությունը թելադրում է իր օրենքները, խոչընդոտները, շեղումները:

Խոհեմությունն այս ամենը հաշվի առնելու արվեստն է: Այն հստակ և բանական

ցանկություն է, այլ ոչ թե ցանկությունների անհապաղ իրականացման ձգտում:

Ռոմանտիկները, որոնք գերապատվություն են տալիս իրենց երազանքներին,

արհամարհանքով են վերաբերվում խոհեմությանը: Գործի մարդիկ, սակայն,

զիտակցում են, որ այլ ուղի չկա, նույնիսկ երբ նպատակը թվում է անհավանական

կամ բացառիկ է: Խոհեմությամբ են տարբերվում արարքն ու պահի տակ գործելը,

հերոսներն ու տաքագլուխները: Դա գլխավորապես այն է, ինչը Ֆրեյդն անվանում էր

իրականության սկզբունք կամ առնվազն՝ դրան առնչվող առաքինություն: Դա

հնարավորինս շատ օգտվելու և հնարավորինս քիչ տուժելու արվեստ է: Ուստի,

**խոհեմությունը մարդկանց համար նույնն է, ինչ բնագործ՝ կենդանիների համար:**

Խոհեմության հինավուրց գաղափարը (phronesis, prudentia) շատ ավելին է, քան

սոսկ վտանգից խուսափելը, ինչն առավել կամ նվազ չափով դարձել է նրա

արդիական իմաստը: Կան մարտահրավերներ, որոնց մենք պետք է իմանանք

ինչպես դիմակայել, և կան վտանգներ, որոնցից պետք է խուսափենք: Այստեղից էլ

խոհեմությունը հին իմաստով՝ որպես “վտանգների և որոշումների առաքինություն”:

Խոհեմությունը նույնը չէ, ինչ վախը կամ վախկոտությունը, ինչպես երբեմն

ըմբռնվում է արդիական իմաստով: Այն ենթադրում է համարձակություն: Առանց

համարձակության, խոհեմությունը հանգում է վախկոտության, ինչպես և առանց

խոհեմության, համարձակությունը դառնում է անշրջահայեցողություն և

անմտություն: Նախ և առաջ, մի վնասիր [եթե կարելի է դրանից խուսափել], նախ և

առաջ՝ պաշտպանիր: Այսպիսին է խոհեմության էությունը, և առանց նրա

առաքինություններն ինքնին անգոր կլինեին՝ կամ նույնիսկ՝ վնասկար:

Խոհեմությունը միշտ չի հանգում վտանգավոր քայլեր ձեռնարկելուն, ոչ էլ՝

մշտապես վտանգից խուսափելուն: Ի՞նչ քայլեր ձեռնարկել: Ի՞նչ վտանգների

դիմակայել: Մինչ ո՞ր սահմանը ես կարող եմ ազատ լինել իմ գործողություններում և

ինչպիսի՞ք կարող եմ լինել նպատակները:

“Խոհեմությունը,- ասում է Ավգուստինոսը, - սերն է, որն ընտրվում է

ըմբռնողականությամբ”: Ոչ թե ձեռք բերվելիք առարկան, որին հետամուտ է լինում

ցանկությունը, այլ այն հայթայթելու կամ պահպանելու միջոցները: Մայրերի կամ

սիրահարների ըմբռնողականությունը, երբ իրենց սիրեցյալների սերը պաշտպանելու կամ նվաճելու համար նրանք անում են այն, ինչ պետք է անեն, կամ (քանի որ մտավոր ունակությունները միշտ պարունակում են սխալվելու վտանգը) գոնե այն, ինչ իրենք ենթադրում են, որ պետք է անեն: Եվ այսպիսի հոգածությունից էլ բխում է մարդկայնությունը՝ իրենցն ու մերը: Մերն առաջնորդում է նրանց, խոհեմությունը՝ լուսավորում: Թող այն մարդկությանը ևս լուսավորի: Եթե խոհեմությունը, ինչպես նշել եմ, հաշվի է առնում ապագան, դրա պատճառն այն է, որ ապագան մոռանալը վտանգավոր և անբարոյական կլիներ: Խոհեմությունը, դա ապագայի արտասովոր հիշողությունն է կամ, ավելի ճիշտ (որովհետև հիշողությունն ինքնին առաքինությունն չէ)՝ ապագայի հանդեպ արտասովոր և անհրաժեշտ հավատարմությունը: Այն ծնողները, ովքեր ձգտում են ապահովել իրենց զավակների ապագան, գիտակցում են սա: ... Իշխանության մեծանալը ենթադրում է ավելի մեծ պատասխանատվություն: ... Մենք ինքնախաբեությամբ ենք զբաղվում, եթե կարծում ենք, թե խոհեմությունը պատկանում է անցյալին: Այն մեր առաքինություններից ամենաարդիականն է կամ, ավելի ճիշտ, այն առաքինությունն է, որին արդի ժամանակաշրջանը դարձրել է ամենաանհրաժեշտը: ... Որքա՞ն չարագործություններ են կատարվել Բարու անվան տակ: Որքա՞ն հանցագործություններ՝ առաքինության անվան տակ: Գրեթե միշտ՝ խոհեմության խախտման հետևանքով: Պետք է զգույշ լինենք Բարով կուռացածներից: Նրանք չափազանց կապված են իրենց սկզբունքներին, որ հաշվի առնեն անհատներին, չափազանց վստահ են իրենց նպատակներին, որ մտահոգվեն հետևանքների մասին:

Բարոյականությունն առանց խոհեմության կամ ապարդյուն է, կամ վտանգավոր: “Caute”, ասում է Սպինոզան՝ “Ուշադիր եղիր”: Կարճ ասած՝ **բարոյականությունը բավարար չէ առաքինության համար. առաքինությունը նաև պահանջում է խելացիություն և հստակություն:** Անխոհեմ է միայն բարոյականությանը հնազանդվելը և անբարոյական է անխոհեմ լինելը: